

ՆԱԶԻԿ ՀՈՒՀԱՆՆԻՄՅԱՆ

6 298, 5, 89, 4962, 5, 352.

Կասէ. «Հաջիլ միք, մեղաւոր էք, Դուռն ամբում եմ, դուրս կորէք» (109):
Թուրգուն*— «շտապ, շուտով». վկայված է Մովսի, Բալուի (թուրկան) քարբառներում⁷: Նույն նշանակութամբ գործածված է հետևյալ հատվածում.

Ծթէ հաճաթ տաս դու ալլոց մարդկան,
Կամ քոնն մնայ օտար մարդոյ տան,
Օտարն տուր իւրեանց, քոնն առ թուրգան,
Թէ չէ կու կոտրեն կամ կու գողանան (88):

Իֆմին—հանդիպում է Նոր Զուղայի և Թբիլիսիի բարբառներում⁸ «մի քան» նշանակութամբ: Տաղերում առկա է նույն իմաստը.

Ոտից տակ իֆմին նա ոչ հաւաքէ,
Կոխելով կոտրէ, կամ ի վայր թափէ (88):

Խնդռուզ— «տրտինգ». գործածական է Ղարաբաղի (խնդռուզի տալ) և Ագուլիսի բարբառներում՝ «անասուններու ուրախ-ուրախ վազվառնել ցատկոտելը (երբեմն՝ մարդու)»⁹: Նույնը և՛ Շոռոթի մոնթերին ուղղված երգիծանքում.

Հանգստի հացն ուտեն բռուզ,
էշ քուռակի պէս գան խնդռուզ (122):

Նշենք նաև, որ Գողթնի գյուղերի խոսվածքներում (օրինակ՝ Փառակայում) խնդռուզ (տալ)–ը նշանակում է գլուխկոնծի:

Մտանք*— Ղարաբաղի, Ագուլիսի (ծովանք) բարբառներում՝ «շատ մանր հողախառն կուտ»¹⁰: Երգիծական տաղերից մեկում օգտագործված է «կերակուր, ուտելիք» նշանակութամբ.

Կառնես լաղար միսուտանքըն,
էնտով կու եփիս ծաւնքըն (114):

Մբուր–մնուր*— արձանագրված է Արարատյան բարբառում «խիստ տխուր» նշանակութամբ¹¹:

Փորդ եղեալ է գինւոյ տուռ,
Սիրտդ տրտում, մբուր, մնուր¹² (136):

Դժվար չէ նկատել, որ բնագրում կիրառվել է նշված իմաստով:

Պժտվիկ*— Ագուլիսի բարբառում՝ պժտվակ, իսկ շրջակա գյուղերի խոսվածքներում՝ պժտվեկ հնչմամբ. «սարփինայի գազաթնահայաց ձողերի վրա դրված հորիզոնական ձողեր, որոնց վրա պառկում են որթատունկի շիվերը»¹³.

Թէ կատուն ելնի էրթիկն, կամ դուրս թնի պժտվիկն... (104),
Կանուխ ցուրտ, թօրոն չէ վառած, Պժտվիկն էլ պինդ սառած (108):

Սայի— Կարնո (Ջավախք) բարբառում օգտագործվում է «լրաբեր, սուր-հանդակ» նշանակութամբ¹⁴: Բառը տաղերում նույն իմաստն ունի.

Տունն կաթում, սային սուգ բերած,
Ալիւր չկայ, ցանն երած,
Մայ ուզում՝ կնիկն աղջիկ բերած (107):

7 ՀԳՔ, էջ 379, լիճԳՔ:

8 ԱՔՆՋ, էջ 217, ՀԳՔ, էջ 404:

9 ՀԳՔ, էջ 1044, ՀՔՔ, էջ 284:

10 ՀՔՔ, էջ 320, լիճԳՔ:

11 լիճԳՔ:

12 Բնագրում ստորակետը, թերևս, կետագրական վրիպակ է:

13 ՀԳՔ, էջ 909, լիճԳՔ:

14 լիճԳՔ:

Սլիկ* — Վանի և Շիրակի բարբառներում կիրառվում է «ճարպիկ, խորամանկ, ժիր, աչքաբաց» իմաստով¹⁵։ Տաղերում տեղ է գտել նշված իմաստով.

Ո՛վ խաբեբայ և խիստ սլիկ,
Աղքատաց հետ է՞ր չես բիռլիկ (137)։

Սկուռէ— գործածական է Մեղրու բարբառում սկուռէ հնչմամբ՝ «կավե փոքր աման»¹⁶։ Նույն նշանակությամբ գտնում ենք տաղերում.

Գինոյ կուժն կշտին ցըցեց, Սկուռէն լցաւ, նի քըցեց... (141)։
Տեկոց*— «խմելը, կոնծեկը, արբեցողություն»։ օգտագործվում է Պոլսի և Սեբաստիայի բարբառներում¹⁷։ Նույնը և տաղերում.

Զլնի շատ խմէք դառնաք բոց,
(նւ) սահմանէք կոհւ, տեկոց,
Դլուխ ծակէք՝ արիւն ի ծոց,
Զեր ծնողաց սիրտը շինէք խոց (188)։

Տնտուզ(?)— դեղուզ հնչմամբ հիշատակվում է Վանի բարբառում «սագին պոչին տակը գտնուած պարկը, ուրկէ կտուցով իւղը առնելով վրան կըքսէ»¹⁸։ Արարատյան բարբառի խոսվածքներում՝ «հավի պոչուկի մաս»։ Տաղերում՝ «տնտուզ մեջքը» նմանեցվում է ուռած, փքված ասմար մուշտակի.

Մէշքդ է անտուզ որպես ասմար (136)։

Տուռնայ— Ստ. Մալխասյանցը բառը դիտում է որպես ոչ գավառական¹⁹։ Հովնաթանի բանաստեղծությունների ժողովածուն կազմողները այս բառի դիմաց նշում են «կռունկ» (պարսկերեն دُرْنَ [dorna], թուրքերեն turna)։ Տուռնա—ն նոր Նախիջևանի և Մշո բարբառներում նշանակում է «ուռուցք, կոշտուկ»։ Առավել հավանական է թվում, սակայն, «տանիքի քիվ»-ը, որ հանդիպում է Մարաշի և Կիլիկիայի բարբառներում²⁰։ Այս իմաստով գործածված է տաղերում.

Կարդալն փուռն այ, Արքայի դուռն այ,
Բարձր է քանց տուռնայ, Նաղարա ու զուռնայ (131)։

Նաղաշ Հովնաթանի տաղերի լեզվում գտնում ենք նաև մեկ-երկու բարբառում պահպանված և գործածվող փոխառյալ բառեր, որոնք նույնպես կարելի է դասել նեղ բարբառային բառերի շարքը, տարբերակելով հանդերձ վերը առանձնացված բառերից։

Աբլաֆ— արաբերեն ابله [able] «հիմար, տգետ, տխմար»։ Ստորե քաղվող չափատողում պահպանել է փոխատու լեզվի բառիմաստը.

Կիժ խստի, աչիզ կանի մեզ,
Կասէ. «Ախմախ, աբլաֆ զձեզ...» (115)։

Բառարանային տվյալներով բառը հանդիպում է միայն Մեղրու բարբառում²¹։

Ախմուրի— պարսկերեն اخمر [axmu] «մուայլ, տխուր, բարկացկոտ»։

¹⁵ ԶԳՔ, էջ 971, ԶԳՔ, էջ 592։

¹⁶ ԱՄՔ, էջ 328, Հմմտ. պրսկ. sihura = սկառաակ (անս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս I, Երևան, 1940, էջ 239)։

¹⁷ ԶԳՔ, էջ 1036, ԼԻԶԳՔ, էջ 281։

¹⁸ ԶԳՔ, էջ 281։

¹⁹ ՄԶԳՔ, հ. IV, էջ 438։

²⁰ ԶԳՔ, էջ 1042, ԼԻԶԳՔ, էջ 281։

²¹ ԱՄՔ, էջ 255, ԼԻԶԳՔ, էջ 281։

Պահպանվել է դարձյալ միայն Մեղրու բարբառում՝ ախմուռ ճնախատինք, պարսավանք» նշանակությամբ²², Տաղերում գործածված է բարբառին հատուկ իմաստային երանգով.

Ղանդ ու շաքար գու մուխուրի,
Քանի ծախես ինձ ախմուրի (57):

Ձի աղերսվում արդյոք պարսկերեն այս բառը ուսերեն ځمورځي բառի հետ:
Բանաւշայ — պարսկերեն (باناڤس [banafse] «մանուշակ».

Մանուշակ — բանաւշայ, սմբուլ, Քաղցր գարնան ունի՞ս խաբար (53), Բանաւշայ, սմբուլ, Ղրմզի գուլ, է՛յ, քաղցր բլբուլ (71—74): Բառարանային տվյալներով գործածական է Ուրմիայի, Սասունի բարբառներում²³: Գողթանի դյուղերի խոսվածքներում բառը մանուշակագուլն երանգ է նշում, օգտագործվելով դուլյնի իմաստով:

Բնշայ: Պատմական Երնջակի (Նախիջևանի ինքնավար հանրապետություն) Փարազաշտ գյուղից Հայաստանի տարբեր շրջաններում բնակություն հաստատած մարդկանց խոսվածքում գործածվում է պնշված բառը՝ «կծկված» նշանակությամբ: Բառը, թերևս, ծագած պետք է լինի պարսկերեն پان [pan] «հինգ» բառից՝ «ձեռքի հինգ մատները միասին հավաքած, սեղմած ու կծկված» իմաստով: Եթե ընդունելի է պարսկերեն փ-ի հայերեն ք անցումը, հետևյալ տողերում բառն ունի հենց այս իմաստը.

Տունն կաթում, սալին սուգ բերած...
Մալ ուզում՝ կնիկն աղջիկ բերած,
Ձեռներն բնշայ ջահրակ մանում,
Ջորջորալով հոգուց հանում (107):

Թունբաթուն — պարսկերեն تون [tun] «մեծ վառարան, կրակարան» արմատից: Բառը պարսկերեն կազմություն ունի Թունբաթուն (հմմտ. دربلر [darbedar] «դռնեղու») «կրակարանից կրակարան» բառացի նշանակությամբ, ասել է՝ «խոշտանգվելու վայր, դժոխք»: Մինչև այժմ էլ լինել բայի հարադրությամբ իբրև անեծք հնչում է պատմական Գողթան աշխարհի գյուղերի խոսվածքներում, ինչպես՝ Փառակայում՝ «թունբաթուն էլիս» — «դժոխք ընկնես, դժոխքի բաժին դառնաս»: Անեծքի նույն իմաստը որոշակի է Հովնաթանի տաղերում՝ «կրակ ընկնի, կրակի բաժին դառնա».

Աղջիկ վեր, ջահրան պատատէ,
Թեքն ծուռ է, շատ է զոռն,
Թունբաթուն ընկնի՜ խոստի գոռն (109):

Լաբ — պարսկերեն لب [lab] «շուրթ».

Աչքերդ քաշել ես սուրմայ,
Լաբդ շաքար, լեզուդ խուրմայ (27):

Բառարանային տվյալներով պահպանվել է միայն Ղարաբաղի բարբառում²⁴:

Համդամ — պարսկերեն همدم [hamdam] «անկեղծ ընկեր»: Թբիլիսիի բարբառում՝ «խոսակից, սրտակից, ընկերակից»²⁵, նույն իմաստն ունի տաղերում.

Դու ես իմ համդամ սոգաշն (28):

²² ԱՄԲ, էջ 292:

²³ ԼԻԶԲ:

²⁴ ԼԻԶԲ:

²⁵ Մայիս-Նովա, Թբիլիսի, 1914, էջ 110, ԼԻԶԲ:

Հիլ (տալ)* — պարսկերեն هستان [heštan] բայի «թողնել, րաց թողնել» ներկայի հիմքն է هل [hā]։ Սկզբ կարդացմունքը ճիլ տուա, Տնտեսութեան լաւ դահմիլ տուր (150)։

Անել և տալ բայերի հարադրութեամբ գործածվում է Արարատյան բարբառի ենթաբարբառներում՝ «բաց թողնել, արձակել»²⁶ նշանակութեամբ։

Մալաս — պարսկերեն ملس [malas] «թթվաշ»։ Ս. Ամատունին, ինչպես և Ստ. Մալիապետցի նշում են իբրև անհայտ նշանակության բառ²⁷։ Մեղրու բարբառում այն գործածվում է «կիսաթթու» իմաստով, մալաշ հնչմամբ²⁸։ Ղարաբաղի բարբառում նշում է «խոշոր հատիկներով, կիսաքաղցր նուան տեսակ»։ Գողթնի խոսվածքներում մալաս-ը «կիսաթթու շլորի մի տեսակ է»։ Հենց այդ նույն միջոց, իմաստով էլ գործ է ածում Հովնաթանը։

Ուր է քո փարաշէն փալաս,
Կիսպած շլոր, Դոտած մալաս (137)։

Չարան-փարան — պարսկերեն چاراند - پاراند [čarand-parand] «արածող-թռչող» բառացի նշանակութեամբ, ասել է՝ «ներքևում-վերևում գտնվող» ներ, վար վեր անողներ», փոխաբերական առումով՝ «վայրիվերո, ափեղ-չրփեղ»։

Չայնն կտրած, բռնած գուլն,
Եղով սանդրում է քաջուլն,
Կարդալիս են շարան-փարան,
Կտրատում են գիրք, աւետարան (119)։

Ըստ ԼիՉԳԲ-ի, Թբիլիսիի բարբառում առկա շարան-փարան անել հարադրությունը ունի «ջանք գործադրել» իմաստը։ Տաղերին հարազատ է փոխատու լեզվի բառիմաստը։

Սաշ — թուրքերեն saç «վարս, մազ»։

Լեզուդ շարբաթ, սաշդ սմբուլ,
Քաղցր լեզվովդ ջուր տուր ինձի (19)։

Կարնո (Շիրակի), Վանի բարբառներում սաշ-ը «երկար, հյուսավոր մազ»-ն է²⁹։

Սարդաֆ* — պարսկերեն سرداب [sardab] «ներքնատուն, նկուղ, մառան»։ Նույն իմաստով օգտագործել է Հովնաթանը։ Նստենք խմենք ձեր սարդաֆն (73)։ Պահպանվել է Թբիլիսիի, Արարատյան բարբառներում³⁰։

Սիան-պարսկերեն سیاه [siāh] «սև»։ Բառարանային տվյալներով հանդիպում է միայն Նոր Նախիջևանի բարբառում³¹։ Տաղերում գործածվում է բազմիցս։ սիան խալ, սիան ծամեք, սիան արտեանունեք, սիան ունեք և այլ կապակցություններում։ Հետաքրքիր, բայց բնական զուգահեռություն։ պատմական Նրնջակի Շոռոթ գյուղում սիան-ը օգտագործվել է սևի փոխարեն և նույնը տեսնում ենք Նոր Նախիջևանում, որի բնակիչների նախնիները, մասամբ վերաբնակիչներ էին հին Նախիջևանից (որի կազմում էր և Նրնջակը)։

²⁶ ԼիՉԳԲ,

²⁷ ՀԱԲ, էջ 454, ՄՀԱԲ, հ. III, էջ 234,

²⁸ ԱՄԲ, էջ 318,

²⁹ ԼիՉԳԲ,

³⁰ Նույն տեղում։

³¹ Նույն տեղում։

Տօշամալ (անել) — Թուրքերեն dōşemek «հարդարել, փռել, ծածկել, կահավորել»: Թուրքերենին մոտիկ հնչմամբ (դոշամա) բառը պահպանվել է Դոդթնի գյուղերում «հարդարել, կահավորել» նշանակությամբ: Նույն իմաստն ունի և այս տողերում.

Աղէկ խալվաթ է օթաղն,
Տօշամայ է արսոժ թաղտն (37):

Քննությունից կարելի է ենթադրել, որ նշված նեղ բարբառային բառերը ժամանակին գործածական են եղել հենց տաղերգուի հայրենի Շոռոթում, նրա ծննդավայրին հարող շրջաններում: Անկարելի է շրջանցել նաև Թբիլիսիի բարբառի լեզվական խառնուրդի ազդեցությունը: Նեղ բարբառային այդ բառերը, սակայն, լեզվի պատմական զարգացման ընթացքում, թերևս, այդ բարբառներից կամ անհետացել են, կամ էլ ինչ-ինչ պատճառներով չեն գրանցվել:

УЗКО-ДИАЛЕКТНЫЕ СЛОВА В ПЕСНЯХ НАГАША ОВНАТАНА

НАЗИК ОГАНЕСЯН

Резюме

При исследовании встречающихся в песнях Нагаша Овнатана диалектных слов выделяются узко-диалектные слова, охватывающие ограниченную диалектную территорию (встречающиеся в одном-двух диалектах), частично или целиком непонятные вне этого ареала и требующие дополнительного разъяснения, например *ամրել* «закрывать», *բարգաթի* «быстро», *իբիբի* «что-то», *իմդուրզ գալ* «подпрыгивать», *ծափեր* «пища» и т. д. Среди диалектных слов имеются и заимствования: *արլաթ* «глупец», *ախմուրի* «хмурый, вспыльчивый», *բախաշալ* «фиалка», *լաբ* «губа» т. д.

Разъяснение таких слов важно для выяснения лексического богатства ранненовоармянского языка, а также с точки зрения междиалектных отношений и исследования словообразовательных форм заимствований.